ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

18ՀՈՒԼԻՍԻ 2019թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էինավագանու 10 անդամներ:
Բացակա էր՝ Աղասի Արմենակյանը:
Աշխատակազմի քարտուղարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
աշխատակազմի աշխատակիցները:
Նիստը վարում էր համայնքիղեկավարի ժ/պ՝ Նարեկ Մկրտչյանը
Նիստը արձանագրում էր՝ Ա.Մարտիրոսյանը:

Նիստ վարողը ողջունեց ավագանու ներկա անդամներին և ներկայացրեց ավագանու 2019 թվականի հուլիսի18-ի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը:

Ն. Մկրտչյանն առաջարկեց հաստատել օրակարգը, իսկ ավագանի Գ. Աբգարյանը ձայնի իրավունք խնդրելով ասաց, որ օրակարգի առաջին հարցի հետ կապված հարց ունի, ասելով, որ զարմանալի է, որ հարցը ներառված է օրակարգում, քանի որ երկու կամ երեք նիստ առաջ ինքը հարցրել է, թե սուբվենցիոն ծրագրերի հարցն ինչու օրակարգում ներառված չէ, ինչին պատասխանվել է, որ սուբվենցիոն ծրագրերն առանց ավագանու, ավելի ճիշտ ասացիք.-«առանց ձեզ» հաստատվելու հնարավորություն կա և մենք օգտվում ենք այդ հնարավորությունից, ինչից հետո մենք՝ ավագանու անդամներս դիմեցինք կառավարությանը՝ այդ ճանապարհը հասկանալու համար: Բանից պարզվեց, որ կառավարությունն անակնկալի եկավ, որ մեր ավագանին այդ սուբվենցիոն ծրագրերը չի հաստատել և իմ տեղեկություններով սուբվենցիոն ծրագրերն այդ հիմքով կասեցված են: Հիմա հարց.- « եթե կար այդպիսի օրինական ճանապարհ, բացատրեք, թե դա որն է, եթե չկար, ապա ինչ ճանապարհով եք հասցրել սուբվենցիոն ծրագրերի հաստատումը մինչև կառավարություն»:

Ն. Մկրտչյանն ասաց, որ սուբվենցիոն ծրագրերն օրենքով սահմանված կարգով դրվել են ավագանու երեք նիստերի, որոնք կամ բոյկոտվել են, կամ չեն կայացել, կամ այդ հարցին չենք հասել, որի մասին համապատասխան գերատեսչությունները տեղեկացված են եղել: Ավագանու որոշումը վերաբերում է ընդամենը սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալուն և այդ հարցը կրկին անգամ նշում ենք, որ երեք ավագանու նիստի օրակարգում ներգրավված է եղել: Քանի որ սուբվենցիոն ծրագրերը բխում են Քասախ համայնքի զարգացման հնգամյա ծրագրից, քանի որ դրանք անցել են հանրային լսումների փուլ, ունեն Քասախ համայնքի բնակչության 90%-ից ավելիի աջակցությունը, ապա խնդրել ենք համապատասխան հանձնաժողովին, որպեսզի հավանություն տան սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար և կառավարության այդ հավանությունը մենք ունենք: Այնուհետև, Ա.Մարդանյանի մարզպետարան ներկայացրած սուբվենցիոն ծրագրերը կասեցնելու համար դիմումից հետո, մարզպետարանը առաջարկ է ներկայացրել կասեցման մասին՝ մինչև ավագանու հավանությանը արժանանալը: Մենք այդ առաջարկը միանշանակ մերժելու ենք, քանի որ այն համայնքի շահերից չի բխում: Որևէ մեկը չի փորձում շրջանցել ավագանու ինստիտուտը կամ չի փորձում սուբվենցիոն ծրագրերը չներկայացնել ավագանու հաստատմանը: Ն. Մկրտչյանը հավելեց, որ այսօր չորրորդ անգամ օրակարգային դրված է

սուբվենցիոն ծրագրերի հարցը, որպեսզի քննարկվի և հավանության արժանանա, քանի որ դրանք արդեն իսկ հաստատված են, հավանության արժանացած են, որոշ ծրագրերի տենդերներ արված են և այլն:

Գ. Աբգարյանը կրկին անդրադարձավ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար ավագանու հաստատման կարիք լինել-չլինելու հարցին, ինչին Ն. Մկրտչյանը պատասխանեց, որ ավագանուն ներկայացված է եղել երեք նիստերում, դրանք չեն կայացել և քանի որ կա ժամանակային սահմանափակում սուբվենցիոն ծրագրերին ընթացք տալուն, ծրագրերը ներկայացվել են համապատասխան հանձնաժողովին, որին կցվել է տեղեկանք հիմնավորում, որ այդ հարցը երեք անգամ դրվել է ավագանու նիստերին, սակայն դրանք չեն կայացել: Սակայն, քանի որ Ա. Մարդանյանի կողմից բողոք է ներկայացվել մարզպետարան՝ սուբվենցիոն ծրագրերը դադարեցնելու վերաբերյալ, դրա հիման վրա ևս մեկ անգամ որոշեցինք քննարկել այս հարցը:

Ա. Մարդանյանը նշեց, որ նման ձևաչափով ոչ մի տեղ ոչ մի նամակ չի ուղղել, այլ ընդամենը ուղղել է մարզպետարան հարց և խնդրել սուբվենցիոն ծրագրերի հաստատման օրինական հիմքեր, և որ նիստը վարողը ստում է:

Ն. Մկրտչյանը կարդաց Ա. Մարդանյանի դիմումը՝ ուղղված Կոտայքի մարզպետին.

- « Հարգելի պարոն Պետրոսյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ձեր կողմից 17.06.2019թ.-ի հաստատված Քասախ համայնքի սուբվենցիոն ծրագրերը չեն անցել օրենքով նախատեսված ընթացակարգերը, այն է Քասախ համայնքի ավագանու կողմից չեն հաստատվել: Զգուշացնում եմ, որ նշված անօրինական գործընթացը չկանխելու և համայնքի ղեկավարի հանցավոր վարքագծին օրենքով նախատեսված կարգով ընթացք չտալու համար դուք՝ որպես պաշտոնատար անձ, կրում եք անձնական պատասխանատվություն»:

Ա. Մարդանյանը շարունակում էր պնդել, որ դիմումի մեջ ոչ մի խոսք չկա կասեցման մասին:

Ա.Թովմասյանը նշեց, որ քանի որ 2019թ.-ի բյուջեն ավագանին չի հաստատվել, հետևաբար չեն կարող հաստատվել նաև սուբվենցիոն ծրագրերը: Ն. Մկրտչյանն ասաց, որ բյուջեն օրենքով սահմանված կարգով հաստատված է, խոսքն այժմ սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալու մասին է: Ա. Մարդանյանն ասաց, որ բյուջեն չի կարող հաստատված լինել, արվել է ընթացակարգային խախտում, ինչպես և սուբվենցիոն ծրագրերի հաստատման հարցում, որի համար պատասխանատու կլինեն այն մարդիկ, ովքեր անցկացրել են: Ն. Մկրտչյանը նշեց, որ իրավական գնահատական կտան պատկան մարմինները:

Երկար բանավեճից հետո նիստը վարողը կրկին դրեց հաստատման 2019թ.-ի հուլիսի 18-ի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝ հետևյալ հարցերով.

1. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով՝ սուբվենցիաների ստացման նպատակով նախատեսված ծրագրերին հավանություն տալու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի համայնքային սեփականություն համարվող հողերի օտարելու թույլտվություն տալու մասին:

Օրակարգը հաստատվեց ավագանու 10 կողմ ձայներով:

Նիստը վարողն առաջարկեց անցնել օրակարգի առաջին հարցին՝ այն է. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով՝ սուբվենցիաների ստացման նպատակով նախատեսված ծրագրերին հավանություն տալու մասին:

Ավագանու անդամ Հ. Գրիգորյանը, ձայնի իրավունք խնդրելով, ասաց, որ ինքն անձամբ տեղյակ չի սուբվենցիոն ծրագրերից և թե ինչու են գործընթացի կեսից ներկայացվում ավագանուն: Ն. Մկրտչյանը կրկին անգամ փաստեց, որ առաջին նիստը, որի մեջ ներառված է եղել սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալու հարցը, եղել է սույն թվականի փետրվարի 28-ին, որը բոյկոտվել է, երկրորդ նիստը եղել է ապրիլի 8-ին, իսկ երրորդը՝ ապրիլի 11-ին, որոնք չեն կայացել, և փաստ է, որ սուբվենցիոն ծրագրերն առանց ավագանուն ներկայացնելու չէ, որ ներկայացվել են կառավարության հաստատմանը:

Այնուհետև, նիստը վարողը հայտարարեց ընդմիջում, որից հետո նիստերի դահլիճ վերադարձան ավագանու ընդամենը չորս անդամ՝ Ե. Աբրահամյանը, Մ. Վարդանյանը, Ս. Հովհաննիսյանը և Հ. Ղազարյանը: Ն. Մկրտչյանը քվորում չլինելու պատճառով դադարեցրեց նիստը:

Ձայնի իրավունք խնդրեց Հ. Ղազարյանը և կոչով դիմեց Քասախի բնակչությանն ու նիստը լքած ավագանու մյուս անդամներին՝ նշելով, որ սուբվենցիոն ծրագրերի հետ կապված հարցերը պետք է հաստատվի, քանի որ դրանց իրականացման արդյունքում Քասախ համայնքը միայն կբարգավաճի: Սուբվենցիոն բոլոր ծրագրերն էլ տրամադրելի են, ուղղված են ի շահ մեր համայնքի, կան շատ զգալի ձեռքբերումներ, իրականացվում են մեծ ծավալի աշխատանքներ, որոնց ընթացքին պետք չէ խոչնդոտել, քանի որ այդ ծրագրերի շահառուները լինելու են Քասախ համայնքի բնակիչները, այդ թվում և իրենք: Ե. Աբրահամյանը հավելեց, որ նիստերի դահլիճը լքած ավագանու անդամները միայն խանգարում են համայնքի աշխատանքներին և առաջարկեց ևս մեկ անգամ զրուցել նրանց հետ:

Որպես վերջաբան, Ն. Մկրտչյանն ասաց, որ արդեն թվով չորրորդ անգամ նիստերը, որոնց օրակարգում ներառված է սուբվենցիոն ծրագրերին հավանություն տալու հարցը, բոյկոտվում են:

Այսպիսով՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը՝ քվորում չապահովելու պատճառով, Քասախ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 18-ի N 7 արտահերթ նիստը համարվում է չկայացած:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Արմինե Մարտիրոսյանը _____